ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունվարի 2016 թվականի N2-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԾՎԱՆԻԿ, ԽՆՁՈՐԵՍԿ, ԿՈՒՐԻՍ, ՉԱՓՆԻ ԵՎ ՎԱՐԴԱՎԱՆՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 145-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2015 թվականի սեպտեմբերի 11-ի «2016 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քվեարկության օրեր սահմանելու մասին» N58-Ա որոշման 1-ին կետի, որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Արծվանիկ, Խնձորեսկ և Վարդավանք համայնքներում՝ համայնքի ղեկավարի, իսկ Կուրիս և Չափնի համայնքներում՝ համայնքի ավագանու հերթական ընտրությունները նշանակել 2016 թվականի ապրիլի 17-ին:
2. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված Արծվանիկ, Խնձորեսկ, Կուրիս, Չափնի և Վարդավանք համայնքների գործող համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ավարտման օրերն են համապատասխանաբար՝ 2016 թվականի մայիսի 26-ը, 2016 թվականի հունիսի 11-ը, 2016 թվականի հունիսի 11-ը, 2016 թվականի ապրիլի 27-ը և 2016 թվականի հուլիսի 2-ը:
3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2016թ. հունվարի 13
ք. Կապան